



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:  
[info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

11.05.2022թ.

**ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պարոն Էդվարդ Հովհաննիսյանին**

**«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանից  
Հեռ. 093-82-26-80, e-mail: [grisha.balasanjan@hetq.am](mailto:grisha.balasanjan@hetq.am)**

Հարգելի պարոն *Հովհաննիսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: Ջրառատ գյուղի (Արաքս խոշորացված համայնք) Մեծամորի խճուղին սուբվենցիոն ծրագրով հիմնանորոգվել է, սակայն առաջացել են մի շարք խնդիրներ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6,9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Երբ է սկսվել է Ջրառատ գյուղի Մեծամորի խճուղու հիմնանորոգման աշխատանքները և երբ է ճանապարհը հանձնվել շահագործման:
2. Որքա՞ն է կազմել վերանորոգված ճանապարհի երկարությունը: Որքա՞ն է նշված ճանապարհի սպասարկման երաշխիքային ժամկետը և երբ է այն ավարտվել կամ ավարտվում:
3. Որքա՞ն է կազմել շինաշխատանքների պայմանագրային գումարը և փաստացի որքան է վճարվել:
4. Սուբվենցիոն ծրագիրն ինչ համամասնությամբ է ֆինանսավորվել:
5. Ո՞ր ընկերությունն է իրականացրել նշված ճանապարհի շինարարական աշխատանքները և ո՞ր ընկերությունն է իրականացրել տեխնիկական վերահսկողությունը:
6. Որքա՞ն է վճարվել նշված ճանապարհի մայթերի վերանորոգման համար: Ո՞ր ընկերությունն է իրականացրել շինարարական աշխատանքները, երբ է իրականացվել աշխատանքները և երբ է հանձնվել շահագործման:
7. Ո՞վ է հայտարարել նշված ճանապարհի և մայթերի վերանորոգման աշխատանքների մրցույթը և ովքեր են եղել մրցութային հանձնաժողովի անդամները:
8. Ովքե՞ր են ընդունել նշված ճանապարհի և մայթերի վերանորոգման աշխատանքների արդյունքները: Եթե կազմվել է հանձնաժողով, ապա ովքե՞ր են եղել ընդունող հանձնաժողովի անդամները և որ կառույցներն են ներկայացրել:

9. Ընդունող հանձնաժողովի անդամներից որևէ մեկը առարկություն, դիտողություն ներկայացրե՞լ է նշված ճանապարհի ասֆալտի որակի կամ մայթերի վերանորոգման որակի վերաբերյալ: Եթե այո, ապա ինչպիսի առարկություն, դիտողություն է ներկայացվել և որ կառույցը ներկայացնող անդամի կողմից:

10. Արդյոք նշված ճանապարհի ասֆալտի որակի կամ բաղադրիչ հանդիսացող այլ շինանյութի որակի լաբորատոր ստուգում իրականացվե՞լ է: Եթե այո, ապա երբ և ում կողմից է իրականացվել ստուգումը, որ կառույցի պահանջով:

11. Հիմնանորոգումից մինչ օրս քանի՞ անգամ է վերանորոգվել նշված ճանապարհը, ինչ գումարի շրջանակում և ում կողմից: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների:***

***Կանխավ շնորհակալություն դիմող՝ Գ. Բալասանյան***

